# ՎԱՆԱՁՈՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
# ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N «ՀՀ ԼՄՎՔ ԳՀԱՇՁԲ-18/94»

«07»նոյեմբեր 2018թ.

ք. Վանաձոր

«Վանաձոր համայնքապետարան»-ը, ի դեմս Մ. Ասլանյան-ի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Անդրեասյանշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ք. Սաղումյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, սույն պայմանագրի նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Վանաձոր համայնքի Երևանյան խճ. 121, Գր. Լուսավորիչ փ. թիվ 31 և Տիգրան Մեծի պողոտա թիվ 16 շենքերի բակերի բարեկարգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

կատարվում են ՀՀ

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝պայմանագրի կնքման օրվանից 40 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհապաղ վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհապաղ վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են

եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները[1]:
Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները լուծարման
3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր
կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր
տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև
4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուին
հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին
հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված
փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:
Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ
Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը
Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ
էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման
ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային
գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4):
Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում,
հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները,
որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am
հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի
հրամաններ» ենթաբաժնում):
4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին,
Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան
հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում
ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է
տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա
ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:
4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում
պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման
արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային
գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-
ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած
բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն
ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և
Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության
միջոցներ:
4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի
ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված
աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված
վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային
գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված
հանձնման-ընդունման արձանագրությունը:
4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված
առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները
նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը
կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝
կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր
է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ
աշխատանքներ:
4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝
1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն
ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի
Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ
սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու
համար.
2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված
պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության
կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով
ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված
աշխատանքներն ընդունվելու դեպքում.
3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի
Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման
համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության

[1] Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:

օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրությունն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 6395000 (վեց միլիոն երեք հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ : Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝
1-ին չափաբաժին 3100000 (երեք միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ :
2-րդ չափաբաժին 2195000 (երկու միլիոն հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ :
3-րդ չափաբաժին 1100000 (մեկ միլիոն հարյուր հազար) ՀՀ դրամ:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[2].

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար :

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով :

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[3]:

---

[2] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ, ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

[3] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝

պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելու հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վանաձորի համայնքապետարան
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900232000779
ՀՎՀՀ 06901936

---------------------------------Մ. Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

,,Անդրևասյանշին,, ՍՊԸ
Ք. Վանաձոր ,,,Տավրոսի 13/4
,,Ինեկոբանկ,, Վանաձորի մ/ճ
Հ/Հ 2205022211465 1001
ՀՎՀՀ 06946038

---------------------------------Բ. Սարգսյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
«07» նոյեմբեր 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ[4]*

## «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃ. ԹԻՎ 121 ՇԵՆՔԻ ԲԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| հ/հ | Աշխատանքի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի գինը (դրամ) | Արժեքը հազ. (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ճանապարհային տաշտակի կառուցում վերին շերտի կտրելով և տեղափոխելով մինչև 20մ բուլդոզերով | 1000մ³ | 0.060 | 138.453 | 8.307 |
| 2 | 3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատորով ջրահեռացման վաքերի տեղադրման համար | 1000մ³ | 0.010 | 152.315 | 1.523 |
| 3 | Նույնը ձեռքով | մ³ | 2.00 | 1.876 | 3.752 |
| 4 | Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում | մ³ | 120.00 | 0.051 | 6.120 |
| 5 | Բազալտե եզրաքարերի ապամոնտաժում | մ | 12.00 | 0.750 | 9.000 |
| 6 | Բազալտե եզրաքարերի տեղադրում օգտագործելով ապամոնտաժվածը | 100մ | 0.12 | 274.195 | 32.903 |
| 7 | Նախապատրաստական շերտ փափուկ բնահողից | մ³ | 3.00 | 0.784 | 2.352 |
| 8 | Հավաքովի ե/բ ջրահեռացման վաքերի տեղադրում | մ | 84.00 | 3.470 | 291.480 |
| 9 | Հավաքովի ե/բ ջրահեռացման վաքեր | մ³ | 4.50 | 128.817 | 579.677 |
| 10 | Մետաղական ճաղաշարի կառուցում | տն | 0.154 | 56.836 | 8.753 |
| 11 | Անկյունակ L 50*5 | մ | 21.00 | 1.989 | 41.769 |
| 12 | Ամրան Φ25 A--\|\|\| | տն | 0.096 | 326.659 | 31.359 |
| 13 | Մետաղական էլեմենտների յուղաներկում 2 անգամ | մ² | 7.00 | 0.966 | 6.762 |
| 14 | Ավազակոպիճից նախաշերտի կառուցում 8սմ հաստ. | մ³ | 36.24 | 2.980 | 107.995 |
| 15 | Բետոնի մանրահատիկ ա/բետոնով ծածկույթի կառուցում /4սմ/ | 100 մ² | 4.530 | 300.993 | 1363.498 |
| 16 | Ավելորդ բնահողի և քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000մ³ | 0.0932 | 460.587 | 42.927 |
| 17 | Ավելորդ բնահողի տեղափոխում ավտոինքնաթափով 7կմ հեռ. | տն | 135.72 | 1.635 | 221.902 |
| 18 | 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | մ³ | 2.20 | 1.876 | 4.127 |
| 19 | Խճի նախաշերտի կառուցում 100մմ հաստ. /20-40մմ/ | մ³ | 0.40 | 11.779 | 4.712 |

[4] Ծավալաթերթ-նախահաշիվը հրապարակվում է ներառյալ ըստ աշխատանքների կատարման արժեքների:

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 20 | Ավազահավաքի հատակի բետոնացում Վ-15, 100մմ հաստ. | մ³ | 0.400 | 37.266 | 14.906 |
| 21 | Ավազահավաքի պատերի բետոնացում Վ-15, 200մմ հաստ. | մ³ | 0.70 | 87.863 | 61.504 |
| 22 | Մետաղական ճաղաշարի կառուցում | տն | 0.1733 | 56.836 | 9.850 |
| 23 | Անկյունակ L 50*5 | մ | 14.40 | 1.989 | 28.642 |
| 24 | Անկյունակ L 63*5 | մ | 8.40 | 2.479 | 20.824 |
| 25 | Ամրան Φ25 A-\|\|\| | տն | 0.076 | 326.659 | 24.826 |
| 26 | Ամրան Φ10 A-\| | տն | 0.002 | 326.659 | 0.653 |
| 27 | Մետաղական էլեմենտների յուղաներկում 2 անգամ | մ² | 6.00 | 0.966 | 5.796 |
| | Ընդամենը՝ | | | | 2935.92 |
| | Վերադիր ծախսեր 13.3% | | | | 390.477 |
| | Ընդամենը՝ | | | | 3326.40 |
| | Շահույթ 11% | | | | 365.904 |
| | Ընդամենը՝ | | | | 3692.300 |
| | Չնախատեսված ծախսեր 2% | | | | 73.846 |
| | Ընդամենը՝ | | | | 3766.146 |
| | ԱԱՀ 20% | | | | 753.230 |
| | Ամբողջը՝ | | | | 4519.376 |

*Կապալառուն աշխատանքները կատարում է Վանաձոր համայնքի Երևանյան խճ. թիվ 121 շենքի բակ հասցեում:

**«ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉ Փ. ԹԻՎ 31 ՇԵՆՔԻ ԲԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| հ/հ | Աշխատանքի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի գինը (դրամ) | Արժեքը հազ. (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ճանապարհային տաշտակի կառուցում վերին շերտի կտրելով և տեղափոխելով մինչև 20մ բուլդոզերով | 1000մ³ | 0.028 | 138.453 | 3.877 |
| 2 | Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում | մ² | 160.00 | 0.051 | 8.160 |
| 3 | Բազալտե եզրաքարերի ապամոնտաժում | մ | 8.00 | 0.750 | 6.000 |
| 4 | Բազալտե եզրաքարերի տեղադրում օգտագործելով ապամոնտաժվածը | 100մ | 0.08 | 274.195 | 21.936 |
| 5 | Բետոնե եզրաքարերի տեղադրում /300*150մմ/ | մ | 7.00 | 5.662 | 39.634 |
| 6 | Ավազակոպիճից նախաշերտի կառուցում 8սմ հաստ. | մ³ | 40.16 | 2.980 | 119.677 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 7 | Բ տիպի մանրահատիկ ա/բետոնով ծածկույթի կառուցում /4սմ/ | 100մ² | 5.020 | 300.993 | 1510.985 |
| 8 | Դ տիպի մանրահատիկ ա/բետոնով ծածկույթի կառուցում /3սմ/ | 100մ² | 0.930 | 235.259 | 218.791 |
| 9 | Ավելորդ բնահողի և քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000մ³ | 0.047 | 460.587 | 21.648 |
| 10 | Ավելորդ բնահողի տեղափոխում ավտոինքնաթափով 7կմ հեռ. | տն | 71.50 | 1.635 | 116.903 |
| | Ընդամենը՝ | | | | 2067.61 |
| | Վերադիր ծախսեր 13.3% | | | | 274.992 |
| | Ընդամենը՝ | | | | 2342.600 |
| | Շահույթ 11% | | | | 257.686 |
| | Ընդամենը՝ | | | | 2600.287 |
| | Չնախատեսված ծախսեր 2% | | | | 52.006 |
| | Ընդամենը՝ | | | | 2652.293 |
| | Ընդամենը՝ ԱԱՀ 20% | | | | 530.460 |
| | Ամբողջը՝ | | | | 3182.753 |

*Կապալառուն աշխատանքները կատարում է Վանաձոր համայնքի Գր. Լուսավորիչ փ. թիվ 31 շենքի բակ հասցեում:

**«ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 16 ՇԵՆՔԻ ԲԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**

| հ/հ | Աշխատանքի անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի գինը (դրամ) | Արժեքը հազ. (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ասֆալտբետոնե ծածկույթի քանդում | մ² | 62.00 | 0.051 | 3.162 |
| 2 | Ա/բետոնե ծածկույթի կտրում մեխանիզմով | մ | 65.00 | 0.150 | 9.750 |
| 3 | Վաքերի տեղադրման համար 3-րդ կարգի բնահողի մշակում ձեռքով | մ³ | 8.00 | 1.876 | 15.008 |
| 4 | Ասֆալտբետոնե ծածկույթի վրայից բերվածքների և ավազի մաքրում | տն | 4.80 | 1.381 | 6.629 |
| 5 | Բետոնե եզրաքարերի ապամոնտաժում | մ | 6.00 | 0.750 | 4.500 |
| 6 | Բետոնե եզրաքարերի տեղադրում օգտագործելով ապամոնտաժվածը | մ | 6.00 | 2.745 | 16.470 |
| 7 | Նախապատրաստական շերտ փափուկ բնահողից | մ³ | 3.00 | 0.784 | 2.352 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 8 | Յավաքովի ե/բ ջրահեռացման վաքերի տեղադրում | մ | 64.00 | 3.470 | 222.080 |
| 9 | Յավաքովի ե/բ ջրահեռացման վաքեր | մ³ | 3.50 | 128.817 | 450.860 |
| 10 | Մետաղական ճաղաշարի կառուցում | տն | 0.0653 | 56.186 | 3.669 |
| 11 | Անկյունակ L 50*5 | մ | 12.00 | 1.989 | 23.868 |
| 12 | Ամրան Φ25 A--||| | տն | 0.020 | 326.659 | 6.533 |
| 13 | Մետաղական էլեմենտների յուղաներկում 2 անգամ | մ² | 3.00 | 0.956 | 2.868 |
| 14 | Ավելորդ բնահողի և քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին էքսկավատորով | 1000 մ³ | 0.015 | 460.587 | 6.909 |
| 15 | Ավելորդ բնահողի տեղափոխում ավտոինքնաթափով 7կմ հեռ | տն | 22.20 | 1.635 | 36.297 |
| 16 | Խճի նախաշերտի կառուցում 10սմ հաստ. | 100 մ² | 0.28 | 111.615 | 31.252 |
| 17 | Ծածկույթի փոսային նորոգում միջնահատիկ Բ տիպի ա/բետոնով ,5սմ/մինչև 5.0քմ/ | մ² | 97.00 | 4.300 | 417.100 |
| | Ընդամենը՝ | | | | 1259.310 |
| | Վերադիր ծախսեր 13.3% | | | | 167.488 |
| | Ընդամենը՝ | | | | 1426.790 |
| | Շահույթ 11% | | | | 156.947 |
| | Ընդամենը՝ | | | | 1583.737 |
| | Չնախատեսված ծախսեր 2% | | | | 31.675 |
| | Ընդամենը՝ | | | | 1615.417 |
| | ԱԱՀ 20% | | | | 323.083 |
| | Ամբողջը՝ | | | | 1938.500 |

*Կապալառուն աշխատանքները կատարում է Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 16 շենքի բակ հասցեում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վանաձորի համայնքապետարան
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Յ/Յ 900232000779
ՅՎՅՅ 06901936

---------------- Մ. Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

,,Անդրեա[illegible],, ՍՊԸ
ք. Վան[illegible] 13/4
,,Ինեկո[illegible],, Վանաձորի մ/ճ
Հ/Հ [illegible]50222[illegible]4651001
ՀՎՀՀ 06946038

---------------- [illegible] Սարգսյան
/ստո[illegible]/

*Հավելված թիվ 2*
*«07» նոյեմբեր 2018 թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
## «ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃ. ԹԻՎ 121 ՇԵՆՔԻ, ԳՐ. ԼՈՒՍԱՎՈՐԻՉ Փ. ԹԻՎ 31 ՇԵՆՔԻ, ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՊՈՂՈՏԱ ԹԻՎ 16 ՇԵՆՔԻ ԲԱԿԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը ** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | «Վանաձոր համայնքի Երևանյան խճ. թիվ 121 շենքի բակի բարեկարգման աշխատանքների ձեռքբերում» | 07,11,2018թ | 16.12.2018 թ |
| 2 | «Վանաձոր համայնքի Գր. Լուսավորիչ փ. թիվ 31 շենքի բակի բարեկարգման աշխատանքների ձեռքբերում» | 07,11,2018 | 16.12.2018 թ |
| 3 | «Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 16 շենքի բակի բարեկարգման աշխատանքների ձեռքբերում» | 07,11,2018 | 16.12.2018 թ |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 07,11,2018 | 16.12.2018 թ |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վանաձորի համայնքապետարան
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900232000779
ՀՎՀՀ 06901936

------------------------Մ. Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

,,Անդրեասյանշին,, ՍՊԸ
Ք. Վանաձոր ,,,Տավրոսի13/4
,,Ինեկոբանկ,, Վանաձորի մ/ճ
Հ/Հ 2050222114651001
ՀՎՀՀ 06946038
------------------------Ք. Սաղումյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 07» նոյեմբեր 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ...րավերով նախատեսված ...չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45221142 | Վանաձոր համայնքի Երևանյան խճ. թիվ 121 շենքի բակի բարեկարգման աշխատանքների ձեռքբերում | | | | | | | | | | 3100 000 | 3100 000 | 3100 000 | 3100 000 |
| 2 | 45221142 | Վանաձոր համայնքի Գր. Լուսավորիչ փ. թիվ 31 շենքի բակի բարեկարգման աշխատանքների ձեռքբերում | | | | | | | | | | 2195 000 | 2195 000 | 2195 000 | 2195 000 |
| 3 | 45221142 | Վանաձոր համայնքի Տիգրան Մեծի պողոտա թիվ 16 շենքի բակի բարեկարգման աշխատանքների ձեռքբերում. | | | | | | | | | | 1100 000 | 1100 000 | 1100 000 | 1100 000 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:
** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Վանաձորի համայնքապետարան
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900232000779
ՀՎՀՀ 06901936
--------------------------Մ. Ասլանյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

,,Անդրեասյանշին,, ՍՊԸ
Ք. Վանաձոր ,,Տավրոսի 13/4
,,Ինեկոբանկ,, Վանաձորի մ/ճ
Հ/Հ 2050022114651001
ՀՎՀՀ 06946038
--------------------------Բ. Սադույան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ____________________ | ____________________ |
| գտնվելու վայրը ____________ | գտնվելու վայրը ____________ |
| հհ ____________________ | հհ ____________________ |
| հվհհ ____________________ | հվհհ ____________________ |

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
# ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «____________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Աշխատանքը հանձնեց | Աշխատանքը ընդունեց |
|---|---|
| ____________________ | ____________________ |
| ստորագրություն | ստորագրություն |
| ____________________ | ____________________ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված 4.1
«    » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և __________-ի
(Պատվիրատուի անունը) (Կապալառուի անունը)
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ______________________-ին կնքված N ____________
(պայմանագրի կնքման ամսաթիվը) (պայմանագրի համարը)
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

| Հանձնեց | Ընդունեց<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ____________________<br>ազգանուն, անուն | ____________________<br>ազգանուն, անուն |
| ____________________<br>ստորագրություն | ____________________<br>ստորագրություն |